ուրս գատաւորութեան Մուստաֆայ խանին, շնորհիւ ամենազօրին Աստուծոյ, որ միշտ հեղու զշնորհս ի վերայ արարածոցս առաւել զբարի յիշատակս շինողաց: Ուստի և ես յուսացեալ ի Տէր ետու շինել զշինուածս ի յարևելեան կողմն տաճարիս և թողլով ի յապակայն բարի վայելողաց նա ևս որոց, որք ունին զաշխատանս և տուրս ի վերայ սորայ, զվարձս ի Տեառնէ ընկալցին, որ և իմ վառեալ ի սիրոյ սրբոյն Ստեփաննոսի և ծառայ նորին և յօրինող շինուածոցս Յոհան խոնարհ եպիսկոպոս Շամախւոյ ի քաղաքանիշ գիւղիցն Կիւլիստանու:»

Կայ և մի արձանագիր դարպասի դրան ճակատին վանահայր Սարգիս վարդապետի Ղալակեցւոյ անունովը, որ պարսպի կիսապատը շինել է տուել և դարպասը, (ըստ որում վանքի շրջապատի մեծ մասը ցանկապատ է վայրի փշերով, մացառներով, ցաքով և այլն). որոյ և արձանագիրն է այսպէս.

«Շինեցաւ ձեռամբ վանահայր Սարգիս վարդապետին Միրզաբէկեանց, 1870 ամի»:

Կայ և մի տող գրուած շտեմարանի դրան եզրին՝ ըստ այսմ. ինչպէս վերևն ասացինք.

«Ի ՌՃԿԴ. թվին շինեցաւ ձեռամբ Աստուածատուր վարդապետին» (1715):

Կան և քանի նշանաւոր առաջնորդաց գերեզմանք տապանագրովք զարդարեալ, Եղիազար Արք եպիսկոպոսի՝ յամին 1609. (Աղբիւրի ճանապարհի վերայ) այս տապանագրով՝

«Այս է տապան Եղիազար Արք եպիսկոպոսի, որ է ի գիւղէն Տուտայ. թվ. ՌՄԹ»: